ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 1-ին, կիրակի.- Գ. կիր. զկնի Վերափոխման: Տօն Գիւտի Գօրու Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սիոն եպս. Ադամյանը: Հընթացս Ս. Պատարագի տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Օրինակ լինիջիր հաւատացելոց բանիւք, գնացիւք, սիրով, հաւատովք, սրբութեամբ» (Ա Տիմ. Դ 12) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 106):

Հավարտ Ս. Պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Սեպտեմբերի 8-ին, կիրակի.- Դ. կիր. զկնի Վերափոխման: Տօն Ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱնապատ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Ջիրեկյանցը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ամենեքին որդիք Աստուծոյ էք՝ հաւատովք ի Յիսուս Քրիստոս» (Գաղ. Գ 26) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Սեպտեմբերի 15-ին, կիրակի.- ԽԱՉՎԵՐԱՑ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ Սրբազան Հայրը «Խաչ քո եղիցի մեզ ապաւէն» (Ժամագիրք) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 14):

Ս. Պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվեց Հոգեհանգիստ՝ նորոգ հանգուցյալ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանի հոգու խաղաղության համար:

Սեպտեմբերի 16-ին, երկուշաբթի.- Տօն է Խաչի: Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գնել աբդ. Սողոմոնյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգիստ՝ վասն համորեն ննջեցելոց:

Սեպտեմբերի 22-ին, կիրակի.- Բ. կիր. զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եւ եղիցի յաւուր յայնմիկ, հանգուսցէ զքեզ Տէր ի ցաւոց եւ ի սրտմտութենէ քումմէ» (Եսայի ԺԴ 3) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 18):

Սեպտեմբերի 29-ին, կիրակի.- Գ. կիր. զկնի Սրբոյ Խաչի: Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սասուն ծ. վրդ. Զմրուխտյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Գաղ. Զ 14) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 16):

Հավարտ Ս. Պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Հոգեհանգստյան կարգ: